

ԲԱԺՆԵԳԻՆ
Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "
—
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
—
Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ.
ՎԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ
Գրութիւնք եւ
չեն տրուիր:
—
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE
—

ՇԱԲԱԹԱՅՍՆԴԷՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ ՆՈՅ 4 ՇԱԲԱԹ 1900 ԹԻԻ 186

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ար լսենք թէ փարիզի մէջ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ու «Հայելի»-ի միջոցաւ ալ ԱՐՏԱՏՐՈՒՄԸ խնդրուած անց-
եալ շաբաթուան յօդուածի մասին ոմանց կողմէ այլ ընդ-
այլոյ մեկնութիւններ կը տրուին: Նոյն յօդուածը իր
ամբողջութեամբը արտատպելնէս չէ կարելի հետեցնել
թէ խմբագրութիւնն անոր ամեն մէկ կետերուն համա-
միտ եղած ըլլալ: Այս բանին ապացոյցը մեր 4-5 տար-
ուան հետեւած ուղղութիւնն է: Մեր չէինք կրնար նոյն
յօդուածը սրբագրել, վասն զի անգամ մը բաւական
թուով ՏՊԱԳՐՈՒԱԾ եւ արտասահմանի հայութեան
մէկ մասին մէջ ցրուուած ըլլալով ի վերջոյ եթէ բազմ-
աթիւ հարուստ, մեզի համար նպաստաւոր չէր ըլլար.
ասկէջ զատ, յատկապէս մեր թերթին համար ալ խըմ-
բագրուած չէր: Մեր նպատակն էր մեր ընթերցողնե-
րուն ալ նոյնութեամբ կարգացնել զայն, որպէս զի ճշ-
մարիտ գաղափար մը կազմելով գրողին համոզումներու
մասին, ըստ այնմ իրենց քննադատութիւնները ընեն:
Եթէ սրբագրելով կամ մէկ մասը յապաւելով հրատա-
րակէինք, գուցէ փոխանակ քննադատութեան՝ աւելի ժո-
ղովրդականութիւն գտնել տալու սխալը գործած պիտի
ըլլայինք: Հանրութիւնը պէտք է որ այս վերջին ժամա-
նակներս կարգ մը ժողովրդական մարդոց ՀՐԱՊԱՐԱԿԱԾ
կարծիքին ու համոզումին ալ վերահասու ըլլալ, մանա-
ւանդ ասանկ նորօրինակ համոզումի մը, և ահա ասոր հա-
մար նոյն յօդուածին «Հայելի»-ի միջոցաւ ալ աշտատալ-
ուիլը խնդրուած էր, ու «Հայելի», ըստ իւր պարտա-
կանութեան, հաւատարմաբար զայն իր ամբողջութեամ-
բը ներկայացուց:

Հարկ չէ ըսել թէ նոյն յօդուածը արտատպած
նուս պէս, անոր հակառակը ապացուցանող քննադա-
տութիւններու համար ալ մեր սիւնակները բաց են:

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԵՐԵՒՆԱԼՈՒ ՊԷՏԲԸ

Մեր մէջ շատ կիներ չարաշար կերպով ու անիրաւո-
րէն կը քննադատեն նորահաս աղջիկները, որոնք իրենց
տարիքին ու զգացումներուն թելագրութիւնով քիչ մը ա-
մէն բանէ աւելի կը սիրեն զբաղիլ նորաձեւութեամբ,
գոյներու և կերպասի, ժապաւէնի ու ժանեակի ընտ-
րութեամբ:

Օ՛հ, ձգեցէ՛ք այդ մատաղ, անփորձ ու թարմ աղ-
ջիկները զբաղիլ իրենց անձնական փափկութեամբ ու
գեղեցկութեամբ: «Գեղեցիկ բաները գեղեցիկներու հա-
մար են» կըսէ Շէքսպիր. ի՞նչ աւելի սիրուն, աւելի
գեղեցիկ բան նոր հասած աղջիկ մը՝ որ կ'սկսի տակաւ
բզանգքին ծայրերը մինչև ոտքերուն երկնցնել, ու խա-
տեաշ կամ սև մազերը տակաւ ուսերէն վերցնելով գըլ-
խուն վրայ զարդարելու փորձն ընել անոնց ուստ ո-
ղորդմանը. ո՛րչափ անուշ ու գեղեցիկ բան է ունենալ
այդ տարիքը, զիս բացարձակապէս չճանչնալ աշխարհը,
բարոյապէս ու նիւթապէս միշտ շօշափելի օրինակներով
զգալ թէ ամեն ինչ սէր ու գորով է իրենց շուրջը, և
այս ամեն երջանիկ բաներու մէջ զբաղիլ ինքն իրմով,
իր անձնական հրապոյրով, ջանալով նոր փայլ մը տալ
մետաքս մաղերու խոպոպումին կամ աշխատելով աւելի
ձկուն ընել հասակը, փափաքելով աւելցնել գոյնին ա-
նուշ թափանցկութիւնը կամ վարդերու կարմիրը, կա-
թի ձերմկութիւնը կամ թուխ սիրուն ձգողութիւնը
պատշաճ ու վայելուչ գոյններով ժապաւէնի կամ ժան-
եակներու. մանաւանդ որ կիներն արդէն բնական ճա-
շակ մ'ունին գեղեցիկ, փայլուն եւ հարուստ բաներու
մասին: Թէև իսկապէս կիներ միշտ իր զարդարանքին մէջ
կը փնտռէ սչ այլ բանը որ զինքը հարուստ ցոյց կուտայ,
բայց այն՝ որ իր գեղեցկութիւնը կ'աւելցնէ: Թողէ՛ք

ուրեմն այդ երիտասարդութիւնը իրենց ճոռողումներուն, իրենց խայտանքներուն մէջ շինել ճաշակի. գաղափարը, հաճելի ու միևնոյն տան պարկեշտ երևնալու միջոցներ խորհիլ. ներքին է այդ տարիքին մէջ համեստ ու պարկեշտ զգացումներով զարդարել ինքզինքնին. մի՛ մեղադրէք անոնց աղւոր երևնալու ջանքը, հաճելի ու շնորհալի երևնալու խուլ ու անզուսպ եռանդը. տարիքն է որ իրենց այդպէս կը թելադրէ ընել. անոնք ծիծաղու խինդն են մարդկութեան. հետեալաւ ներքեք անոնց քիչ մը զարդարուելու համար ունեցած երազանքին, բաւական է որ մինչև շոյլութեան ու պարսկութեան չհասնի այդ իղձը: Պարզասիրութիւնը գեղեցիկ ու պատուական յատկութիւն մըն է կանանց քով, բայց ամեն տարիքի յատուկ չէ այն: Մեր կիները, բազմաթիւ եւրոպացի կանանց հետ, աւելի կը զարդարուին քոն իրենց աղջիկները. եւրոպացի աղջիկ մը պարզ ձև մը կրնարէ թէև հազուադէպ ու աժան կերպս մը, բայց թարմ թարմ բանի՝ ժապաւէն կը գնէ մազին ու վզին կապելու համար. գոյնզգոյն շղարշներ ու ժանեակներ՝ դէմքին ու գոյնին նոր փափկութիւն մը տալու. համար, իր այցելութեան ու սոնական օրերու հազուադէպ ընտիր կերպասէ ու գլխարկը փետրազարդ է, եւ անգամ մը ամուսնանալէ վերջը, երբ մայր եղած է ու ծանրաբեռնուած ինքն ալ իր կարգին ընտանեկան ու առտնին հոգեբով, ա՛լ արդէն ինքնաբերաբար ժամանակ ու պէտք չգտնէր զբաղելու երկարապատում արդուզարդով:

Ո՛ր մայրեր, դուք ալ որ ձեր կարգին երիտասարդ ու փափուկ աղջիկներ եղած էք՝ մօր մը աւելի կամ նշանաւ հսկողութեան ու խտուրթեան ներքե, ինչե՛ր անցած են ձեր հոգիին մէջէն, ինչե՛ր փափաքած էք ու երազած, բայց հիմա ի՛նչ դառն հեգնութեամբ կը խընդարք ձեր այն հին բաղձանքներուն վրայ, զոր այնքան շնչին կը գանէք ու սնուի. միևնոյն բանը պիտի պատահի նաև օր մը ձեր նորահաս աղջիկներուն համար ալ, բաւական է որ կարենաք անոնց նկարագիրն օժտել կարեորին ու օգտակարին գաղափարով. մի՛ զրկէք այդ գոյտրիկ արարածներէն իրենց տարիքի փափուկ հակումները. բաւական է որ ՀՍԿԷՔ անոնց զգացումներուն պարկեշտութեան՝ ընկերութեան մէջ այն դիրքին ու կարեւորութեան, զոր կը ջանան տալ իրենք իրենց, և օր մը երբ ընտանիքի վարիչներ եղած են, ու պարտականութեանց ամեն զգացումները կազմակերպուած իրենց մէջ՝ կանուխէն տրուած լաւ ու լուրջ դաստիարակութեան մը վրայ հիմնուելով, փափագութեամբ չափ պարկեշտ ու պարզասէր ընտանիքի մայրեր պիտի ըլլան անոնք:

Հաստ մայրեր սխալ սկզբունքի մը կը հետեւին իրենց աղջկանց արդուզարդի մասին ունեցած փափագները սահմանաւորելու նպատակաւ: Եթէ անոնք բաղձան

տէրն ըլլալ գարդի առարկայի մը, անոնց բերանը փակելու լաւագոյն միջոցը կը նկատեն ապագայ խոստումներով շլացնելու ջանքով, ամուսնանալէ վերջ անոնցմէ շատ գեղեցիկները պիտի վայելեն, շատ աղւոր բաներ պիտի տեսնեն. ինչ որ կը փափագէին օւնենալ և ընել իրենց աղջկնութեան օրով, ամուսնութենէն վերջը պիտի վայելեն, իբր թէ ամուսնութիւնը բախտի թուղթ մը եղած ըլլար, ու ամենէն նպաստաւոր պայմաններով շահուած. ո՛ր մայրեր, ակնարկ մը նետեցէք բոլոր ձեր ծանօթ կիներուն վրայ, բոլորն ալ, գրեթէ շատ անշաւն բացառութեամբ, ի՛նչ եղած են իրենց ամուսնութենէն վերջը. ճշմարիտ ու պարտաճանաչ տանտիրինը, նիւթական էն ճոխ պայմաններու մէջ իսկ, ստիպուած ըլլալով ամուսնոյն հաճելի երեւնալու, տունը կանոնաւոր ու գուրաթ պահելու և վաւերներուն հսկելու ծանրածանր պարտականութեանց տակ տքալ՝ ալ կրնա՞ն ճաշակաւոր երևնալու համար աղջիկնութեան ժամանակին պէս ժամերով արդուզարդի զբաղիլ: Ուրեմն մի՛ խնայէք անոնցմէ ժամանակն ու ժապաւէնը որչափ ատեն որ ազատ են այդ բաներով զբաղելու. այդ ալ գիտութիւն մըն է, ճաշակի ուսում, որ ապագային համար շատ օգտակար պիտի ըլլայ իրենց: Ամենէն զբաղած վիճակներուն մէջ թափթփած ու անճաշակ պիտի չերևան, որովհետեւ արդէն գիտցած պիտի ըլլան թէ ո՛ր բանը իրենց կը վայելէ, ու միշտ գեղեցիկ պիտի երևնան, երբ ժամանակ իսկ չգտնեն քանի մը անգամ հայելին նայելու:

ԱՐՏ

ԱՉԳԱՅԻՔ

—o—

Ազգային Պատրիարքարանի կողմէ ինչպէս ծածկաստանի, նոյնպէս և Պուլկարիոյ բոլոր Հայ եկեղեցիներու Թաղական խորհրդոց այս շաբաթուղրկուած է կոնդակ մը, որ կոչում կրնէ ամեն ազգայնոց՝ Ազգ. Հիւանդանոցի սեպհական 1901 տարւոյ օրացոյցէն գնելու, որուն հասոյթը ինչպէս յայտնի է կը յատկացուի ազգին տան մէջ պատասպարող որբ, անկեալ, չբաւոր և հիւանդ հազարէ աւելի ազգայնոց պէտքերուն:

—Ստոյգ աղբիւրէ կը տեղեկանանք թէ՛ Թաղ. խորհուրդ մը՝ մկրտութիւն, պատկազրու-

թիւն և ննչեցեալներէ քահանայից տրուելիք իրաւունքը 2-3 ամիսներէ ի վեր ուրիշ ծախսերու համար զործածելով, զանոնք շատ թշուառ վիճակի մը մատնած է, որով քահանայք ալ որոշեր են ուրիշ քաղաքներու թաղ, խորհրդոց հետ բանակցել, նոյն տեղերու եկեղեցիներէ մէկուն մէջ պաշտօնավարելու համար:

(100 զրուշ առնուած պսակ դրամէն քահանայի մը տրուելիք 12 ու կէս զրուշն ալ շատ կերեայ կոր):

—Անցեալ կիրակի գիշեր 'ի նպաստ տեղւոյս Ազգ. վարժարանաց տրուած ներկայացման պահուն թատրոնին դրանը առջին տեղի ունեցած խիստ դատապարտելի տեսարանին շարժառիթ տուող ու անոր արծարծմանը նպաստող անձնաւորութեանց կիմացները որ շատ գէշ ազդեցութիւն ըրեր է այդ բանը երկսեռ հանդիսականաց վրայ, մանաւանդ «գանակ քաշեց (?)» ի տարաձայնութիւնը: Մէկ քանի օտարական ընտանիքներ որոշեր են ուրիշ անգամ մեր կողմէ տրուելիք թատերական նպաստներու ներկայ չը գտնուել, «գանակ կը քաշուի» ի վախէն:

(Ամեն գործի մէջ մեր ցոյց տուած գարշելի եսամոլութիւնն է որ տուններնիս կը կործանէ):

—Շարժում թերթը գաղութեաց հրատարակուելէ և ըստ խմբագրական վերջին յայտարարութեան Յունկարին պիտի վերսկսի Վիեննայի մէջ: Շարժումի Տպագրական տառերը և այլ գործիքները ծախուեցան, որովհետեւ հարկ չէ տեսնուեր աւելորդ ծախքեր ընելով զանոնք Վիեննա փոխադրելու, ուր Միլիթարեան տպարանին մէջ մեծ քանակութեամբ տպագրական տառեր կը գտնուին:

Կը լսենք թէ տեղացի մէկ քանի երիտասարդներ «Շարժում»ի տառերը ծախու առնելով մտադիր են անոր կէս ծաւալին մեծութեամբը թրքաբարբառ քաղաքական թերթ մը հիմնել, հատը 10 փարայի ծախելու պայմանաւ:

—Պէրլինէն մեզ կը գրեն նոյ. 5 թուականաւ. «Հոս հաստատուեցաւ բարձրագոյն վարժարան մը, ուր կարգ մը գերմանացի միսիոնարներ որոնք Փոքր Ասիա պիտի երթան թուրք տարրին մէջ բողոքականութիւնը տարածելու:

գորանին մեկնութիւնը պիտի սորվին: Պատուելի Ամիրխանեանց որ լաւ թուրքերէն, Պարսկերէն ու Արաբերէն գիտէ, Առաջին դասատու կարգուած և արդէն սկսած է դասաւանդութեան»:

ԹԱՏԵՐԱԿԱՆ

«Վէսէլո» հայ թատերախումբը այս գիշեր պիտի ներկայացնէ «Պ. Ս.» տառերը անուն տրամախառն կատակերգութիւնը 4 արարուած:

Վազը իրիկուն ալ «Երկու թշնամի գրագիրները» նոյնպէս 4 արարուած:



ՓՈՔՐ ԹՂԹԱՏԱՐ

* * * Սիրտդէ.—Ձեր նամակին հրատարակութիւնը յաջորդով:

Վառնացի Հայ մը.—Եթէ մինչեւ յառաջիկայ չորեքշաբթի այդ մասին գոհացում չտրուի, այն ատեն կը հրատարակենք ձեր բաց նամակը:

Տ. Յ. Յ. Տոպրիշ.—Հաճեցէք մեր նամակին պատասխանել:

Որբախնամի վերջին ընդհ. ժողովոյ առթիւ գրութեանս մէջի «պոռոտախօս» բառը Տ. Թ. Փ. ի համար չէր:

ԱԿԱՆԱՏԵՍԸ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Հրատարակուեցաւ ՈՐԲՈՒՆԻ կամ ՊԱՏԿԵՐԱՋԱՐԴ ԲԱՑԱՌԻԿ ԲԱԶՄԱՎԷՊԸ, ի նպաստ հայ Որբիկներուն: Եօթանասուն գեղատիպ պատկերներէ և խիստ չահեկան յօդուածներէ բաղկացեալ սոյն երկը որ Վենետիկի Միլիթարեան Վերապատուելի Հարց փառքը կաւելցնէ, իր համեստ գնոյն տաճնապատիկը աւելի արժէք ունի: Վրոտահութեամբ կըսենք թէ գրպանը մինակ 2½ ֆրանք ունեցողն իսկ պիտի փափագի ունենալ այս սքանչելի հատորիկէն:

Դիմել ի Վենետիկ Ս. Ղազար, հետեւեալ հասցեով.

Redaction de la revue *Parmaev*

St. Lazar

VENISE

(ITALIE)

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԿԱՌԱՊԱՆԸ



Անցեալ կիրակի գիշեր տեղւոյս Սայէտի-
նէնիէի սրահին մէջ ներկայացուեցաւ վերոյիշ-
եալ տրամը: Ի սկզբան կը կարծէի թէ ամենօր-
եայ պարզ ներկայացման մը ականատես պիտի
գտնուիմ, բայց ընդհակառակը, այս անգամուա-
նը հետզհետէ հետաքրքրեց զիս և ինծի պէս
յուզեց նաև հանդիսականներն ալ որոնք միշտ
ծափահարեցին դերակատարները:

Ինչպիսիք ինքը. — «1870ի Փրանքո-Ալմանա-
կան պատերազմին մէջ գտնուող կամաւոր զին-
ուոր մը որ նախկին կառուպան մըն էր, իւր
կինը և երեք տարեկան Մարլիթ աղջիկը ձե-
գելով հայրենեաց պաշտպանութեան կերթայ.
հաշուութիւնը կ'ընդունէ ետքը երբ իւր գիւղը
(Պուսիէր) կը վերագառնար թէ կ'ընդ և թէ զա-
ւակը հոն չի գտներ. կինը թշնամի բանակէն
արձակուած ուսմբէ մը սպաննուած և աղջիկն
ալ ծնողակորոյս որք իւր որդեկը աշնուական
կոմսի մը խնամուցը յանձնուած էր: Կառապանը
14 տարիներ իւր զաւակն փնտռելէ վերջը պա-
տահամար նոյն կոմսին քով կառապան կըլլայ,
առանց գիտնալու թէ իւր աղջիկը կոմսին որդե-
գիրն է: Կոմսը ծեր և հիւանդ, կուզէ իր որդե-
գիր աղջիկը ամուսնացնել անոր սիրահարուած
մէկ սպային հետ, ու նօտարին ներկայութեանը
աղջկանը 500.000 ֆրանք օժիտ տալու պայմա-
նադիր մը ստորագրելէ ետքը այդ գրամը Բա-
րիդի պանքան տանել յանձնելու համար անմի-
ջապէս ճամբայ կելլէ: Նօտարը ողբելով այդ ա-
հագին գումարին տիրանալու, իւր երկու ըն-
կերներուն հետ համախորհուրդ՝ ճամբան կըս-
պաննէ կոմսը և 500.000 ֆրանքը ձեռք անցը-
նելէ ետքը Մարկրիտին սիրահարեալ, զայն ա-
ռեանգելու խորհուրդը կը յղանայ: Խեղճ կառա-
պանը կորուսեալ աղջիկը գտնելու համար նօտա-
րին իրեն տուած խոստումին փոխարէն կը հա-
ւանի սոյն առեանգութեան. բայց երբ կոմսին
կտակին համաձայն պահեստի արկղը կը բացուի,
անոր մէջէն կառապանին սպաննուած կնոջ պատ-
կերը և ձեռագիր նամակը կը գտնուի. այն ա-
տեն կառապանը իր աղջիկը կը ճանչնայ և ոճ-
րագործ նօտարը չի կրնար իւր նպատակին հա-
նի: Ներկայացումը կը վերջանայ նօտարին ըս-
պաննութեամբը ու Մարկրիտ իր նշանածին միա-
նալով, կառապանն ալ կը միթիթարուի:

Գերակատարներէն Պ. Գ. Յակոբեան որ վե-
հանձն և բարեփրտ կոմսը կը ներկայացնէր,
գողգոյուն և հիւանդի մը բնական ծանր արտա-
սանութեամբը լաւ կատարեց իւր դերը: Պ. Ե. Ե.

րախան, աշխատի բնական կերպով ներկայա-
ցուց ապուշ ծառային դերը՝ որ զինքը չի ճանչ-
ցողները անպատճառ ապուշ ծնած է պիտի ը-
սէին: Տիկին Մարի, և րիտասարդ սպայն շատ լաւ
կատարեց իւր դերը, խօսուածքը, շարժուածքը և
ձեւերը կը համապատասխանէին նշանածին մը խօս-
ուածքին ու ձեւերուն, միայն թէ չուներ այն առ-
նական խորխուրթիւնը որ իւր հակառակորդին
աղգեր, և այս ալ բնականաբար ներելի էր իրեն:
Նօտարը որ Պ. Վ. Պապեանն էր, չարագործի դե-
րը կատարելապէս ներկայացուց թէ ճայնով, թէ
գէմքով և թէ շարժուածքով: Կառապանը՝ Պ. Պէն-
լեան բարեյիշատակ Գարեգին Ռշտունին յիշեցուց
ինծի. որ կատակերգակ մը ըլլալով Լիոնի Սուր-
հանդակի մէջ գատաւորին լուրջ դերը անանկ լըր-
շութեամբ կատարեց, որուն նմանը չկրցան ու-
րիշները մինչև այսօր ընել, կատակախօս Պէն-
լեանն ալ անոր պէս փոխանակ խնդացնելու՝
լացուց հանդիսականները: Տիկին Լիւսի՝ անմեղ
Մարկրիտի դերը յաջողապէս կատարեց, տարուան
մը մէջ բաւական յառաջացած է իր ընտրած
սոսկարէզին մէջ. միայն խորհուրդ կուտանք ի-
րեն որ լաւ ուսումնասիրէ կատարելիք դերը եւ
քիչ մը աւելի խնամք տանի արդուզարդին:

Արդար ըլլալու համար պէտք է խօստովա-
նինք թէ, Վէսէլօ խումբին ներկայ ձմեռնային
շրջանին մէջ ներկայացուցած խաղերուն առաջի-
նըն էր սոյն բարոյալից լուրջ թատերախաղը որ
իրաւամբ հանդիսականաց գահունակութեանը և
ծափերուն արժանացաւ:

Կապանքն այսօրինակ թատերախաղերու
ներկայացման:

ԹԻԻ 25 ԱԹՈՌ

ՀԱՐՅ—ՊԱՏԱՍԻԱՆԻ

Ինչ է աղօթքն.

— Հոգւոյն շնչառութիւնը:

Ինչ է կեղծաւորութիւնը.

— Յարգումն մը, զոր մոլորութիւնը կը մասն-
ցանէ սուսփիւնութեան:

Մարդկային գործոց եւեք շարժառիթները ո-
րո՞նք են.

— Հաճոյք: Եւեք եւ Պարսկականութիւն:

Ինչ է կեանքը.

— Թաւրոն մը՝ ուր կը մտնենք, կը դիտենք
եւ դուրս կեցնենք:

Սկզբունք յունեցող մարդը ինչի՞ կը նմանի.

— Անդէկ նաւու:

Ի՞նչ է սնապարծութիւնը .

—Այնպիսի կոռոք մէ, որուն ամեն ինչ կը զոհենք .

Հպարտիւն սեղանին վրայ ի՞նչ կը գտնուի .

—Այսօր առաստփիւն, վաղը աղփաստփիւն, միւս օր խայտառակութիւն .

Ի՞նչ են բժիշկները .

—Յոյս ծախողներ . աւոր հասար միշտ կը փնտրուի .

Գ.

Ծ Ի Ծ Ա Ղ



Երիտասարդ Պարոն մը տարիոքտ կնկան մը քծնած միջոցին, ընկերներէն մէկը վրայ հասնելով կըսէ .

—Օ . . . այդ ի՞նչ է, բարեկամ, կը շնորհաւորեմ քեզ .

—Բան մը չէ՛, կը պատասխանէ սիրահար պարոնը կարմրելով, հին ազգաց պատմութիւնը կը թղթատէի .

Արուեստահանգէսը այցելող Եանքի մը անցեալները Բարիդի մէջ ճաշարան մը կը մտնէ ու ճաշելէ ետքը վճարելու միջոցին ճաշատան տնօրէնը իրեն կըսէ .

—Պարոն, պէտք է գիտնաք թէ հաշիւին մէջ չէ կարսօնը, (կարսօնին նուէրը կ'ակնարկէ) .

—Բայց ես կարսօն չը կերայ, կը պատասխանէ Ամերիկացին պաղ արիւնութեամբ .

Երեք անգամ ալի մնացող հարուստ կեանքացիի մը բարեկամներէն մին առաջարկեց սնորհոր չորրորդ անգամ ամուսնանայ իր ճանչորներէն խիստ գեղեցիկ և պատուաւոր այրի կնոջ մը հետ : Առ այս կեսարացին սապէս պատասխանեց .

—Պիլատէր, պու թէխիֆինիզի մէմնունէն զապուլ իտէրիմ, հաթտա թրախօմասըզ պիլէ էվլէնէպիլիբիմ իսէ տէ, կօզիւմ զօրիւմուշ օլտուղունտան, էօլմէյէճէզինէ տայիբ պանղա պիր մէօլութէպէր քէֆիլ կէօրսէթմէլի տիր :

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

—***—

ԲԱՍՏՐՄԱԼԸԳ

(Կէյէն նիսիսէսէն)

Ավուռնուն օրթասընտա հէբսի տէ քէնտի շալվարլարընը կիլմիշ օլուպ պարըսաքլարը բազլամագտա իքէն, ջըթբըթ տուտու տըր գաբուտան իչէրի կիրտի :

—Օ, օ, եաալը եէրի սէմիզ օլտուն, մօրու պաարի հիչիճիք տէ տուլուրմազլար մը .

—Իշթէ տուլուրտուք եա, Մայնօս հապէր վէրմէտի մի . . .

—Ապու իշթէ պէնտէ օնու տէյօրտում եա, էկէր հապէրիմ օլմազսա ագլմտան պիլէ կէչմէյէճէք իտի :

—Է մօրու . . . դօմշունուզ նէ՞ եաբտը օ զապուն ինէք լէն, պիլիմքի տէ պիր ալ թէրս տիր ամա՛ կէնէ բարայը բարայա վէրիբ : Մանտայը ալմըշ տէյի քէնտիսիննէն հէբէյիճէ չէքիշտիմ ամա, շիմտի պէնիմ տէ կէօյնիւմ եաթտը :

—Աման, աման, պուլմուշուն տա պուլանը եօրսըն : պիր կէթիլմէզինէ, օնմատըղընա տիւշէյիտին տէ պէն սանա սօրարտըմ օնու :

—Պէ ճանըմ, էյի տիր ամա՛ քէնտիսի պիր ալ թէրս տիր :

—Պէ այօլ, հերիֆին քէլինի գըզտըրմասանա . հէմ պանա պագ, դատըն նէմ տիր իտի քի էրքէքլէրէ գըզմագ հարամաղ, դանլարը պաշլարընա չըգրպ հէմէն եաբաճագլարընը շաշըրըրլար

—Աման մօրու, օ վագըթտա օնլար ատամըն պաշընա չըգարլար, ալ շէյ չէքմէտիմ եա քայնանամը էվտէն օղրաթմագ իչին . կէճէ կիւնտիւզ պիլիմքինէ եալվարարագ անասընը էվտէն գօլմագ իչին գանտըրտըմ :

—Տօղրուսունու խթէլսէն՝ շիմտիքի գայնանալար տա չէքիլէճէք մաթախլար տէյիլ :

—Էօյլէ եա, պիլթիւն կիւն մըր մըր . դալգարսըն գարըշըր, օթուրուրսըն գարըշըր, ինսան եափաճաղընը շաշըրըր, ուշաընա՛ մը պագօըն եէմէյինէ մի պագսըն :

Պու սըրատա պէշիքտէ պուլունան քիւչիւք չօճուգ աղլամաղա պաշլատըղընտան, մէրգումէ իքի գատընլար միւքեալէմէյէ իթիմ վէրտիլէր :

—Ապու ատճազլարը պաթսըն, նասըրտա ա-

շատաւ եալընը պրագմըլար. ալ գալա գաթը-
լայաճագ մըջ տէյու պաղըրարագ Մաթոս աղանըն
էհլի ալլուստան օտայա տօլրու սէյիթիտի իսէ տէ՝
ֆագաթ հըզլը կիթ մէօինսէն շալվարընըն սէօքիւք
եէրի էնքսէրին պիւրինէ իլիշէրէք՝ գատընը եէ-
րէ տիւշիւրտիւ:

— Եէրին տիպինէ պաթաեըտըն սուսթեա,
պապամըն էվինսէ կէօրմէտիքլէրիմի պուրատա
պաշլատըմ կէօրմէյէ:

Պրագալըմ քի Մաթոս աղանըն էհլի քէնտի
չօճուղույա կէօրիւշտին. պիւշ՝ պաղըրագ թաշթա-
սընըն էթրաֆընտա թօփանան գատընլարըն
միւքեալէմէյէրինի տիննէյլլիմ:

— Աման մօրու, հիշ ինանըլըմ մը օնա տա:

— Սէն իսթէրոէն ինանմա, ագշամ Սօօմէ
հալամ անասըննան գօնուշտու:

— Էյ, մօրու ինան նանըլ ինանըր եա, հիշ
գըզ օղլան գըզը էլին հէրիֆինլէ եօլլամագ օլոլը
մու, տօղրուսու պու պէնիմ՝ ագլըմա սըղաճագ
շէյ տէյիլ:

— Տիւնեա ֆէնա օլտու մօրու, հիշ քիմսէյէ
ինամ եօլ. պիլլիմ թագօրտան նէ՝ ումարտըն.
Միանղարայլա գօլթէ եարարմըջ:

— Հըհ, պաճագսըզա պագ, պօյու պէօյիւ-
մէտէն ագլը՝ մը պէօյիւմիւշ:

— Նէ՝ սանտըն եա. սէն հէրքէօի քէնտին
կիպի պիլ: Սոլա սոլա, իշթէ Մաթոս աղա կէլի-
յօր, օ պէօյլէ շէյլէրտէն հաղ էթմէլ:

Մաթոս աղա — Բարիկուն, իշինիզ պիթտի՞ մի.
պիլլիմ հասըլ գարը նէրէտէ եա, կալիպա ու-
շաըն եանընա կիթմիշ օլմալը:

— Տօղրուսու Մաթոս աղա, եարըն իշկէմպէ
չօրպասընտա աղղընըն սուլարը ագաճագ. հէմ
եարտըմ հէմ իպրէնտիմ, պէօյլէ իշկէմպէ տահա
կէօրմէմիշիտիմ:

— Օնու ագշամտան ֆըրընա վէրմէլի տէ՝
սապահա գաաար աա՛ր աա՛ր բիշտին:

Օրթալըգ գարարմաղա եիւզ թութմուշ օ-
լուպ, գատընլար իշլէրինի պիթիթիպ, եանի պա-
ղըրսագլարը բագլայըպ վէ թուլլայըպ ճիւմլէսի
տէ իշէրը չէքիլտիլէր: Պու սըրատա տըշարտան
տալէթ օլունան գըզլար՝ սաթըրլարը էլլէրինտէ
պիլի պիլիլին արգասընտան իշէրի կիլիպ էթ
թալթալարընըն էօնիւնէ կէշէրէք թագ թո՛գ
գըլմաղա, իհիթյար գատընլար տալի էլլէրինէ
պիլէր պուշագ ալըպ՝ քէմիքլէրին իսթիւնտէ
գալմըջ օլան էթլէրի վէ սընըրլարը բագլամա-
ղա պաշլատըլար:

(Տէփալի)

ՔէՏԻ ԿԷՕԶԻԻ

ՅԵՐԵՐԻ

(Աժանս Բոճոժիկ եւ Ընկ)

Բարիկ

Որովհետեւ արուեստահանգէսը գոցուած է,
այժմէն որոշուեցաւ ապագայ արուեստահանգէ-
սին մէջ տաղաւար մը ունենալ, ուր պիտի ցու-
ցադրուին հայ յեղափոխութեան ժանտախտները
եղող մէկ քանի վախճաններ վարիչներ ու տուղի-
նաներով խաչագողներ:

Քամչի պօյու

Անցած օր՝ վեցամեայ մանուկ մը մեռաւ
(որ մկրտուած էր) և տէր պսպան՝ փոխանակ
ըստ օրինի ննջեցեալը եկեղեցի առաջնորդելու՝
շիտակ գերեզմանատուն տալաւ, սա պատճառաւ
որ, եթէ եկեղեցի տանէր՝ իր տանը պարտէղը
չորնալու գրուած սուճուխն ու փաստրման ներս
առնելու համար մէկ քառորդ ժամ ուշ մնացած
պիտի ըլլար:

Քամչաթքա

Նիգօլի անուն կախովուզ մը քաջարէն 125
դրուշի ծախու ազած մէկ էջը քեալկիր ախա-
րէթի մը պէս կնկանը վրայ ըրաւ, որպէս զի
երբ ունեցած պարտքին համար գոյքերը ծախու
հանեն՝ էշն ալ վրայ չի տայ:

Ուլիցա սառկապուռկա

Հոս կիրակի գիշերուան տեղի ունեցած
հարսնիքին պարերը զատ զատ սինեակներու մէջ
աշա Փրանսէ և աշա Անմցէ ձեւերով եղան: 60նոց
ճահիլ մը ֆրանսական սինեակին տիւրիժէ եղաւ,
բայց լաւ գաղիւրէն չգիտնալուն՝ հրամանները
տաճկերէն լեզուով կուտար, զորօրինակ, անա-
վան ըսելու տեղ՝ «լէրի եիւրիւլէն», շէն Տէ
Տաւին՝ «տէյիշ տօգուշ էտին», կաշօլին՝ «գու-
ճագլայըպ գօշուն» ևայլն ևայլն:

Մանրամասնութիւնք յաշորդով:

Թիւ 184 «Հայեցի»ի Հարցարանը

«Վիճակագրութեանց մէջ ամենէն խոշոր դու-
մարը կաշմոզը ո՞ր բանը կրնայ ըլլալ»

Պատասխան

— Անկուտիներուն թիւը:

Ժընէյ

Տ. Գ.

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.